«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտի հիմնադրամի
Գիտական խորհրդի 23.09.2021 թվականի
թիվ 56 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ կամ ՀՖԿՍՊԻ) միջազգային համագործակցության եվ զարգացման ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) նպատակը, խնդիրները, կառուցվածքը, կառավարումը և իրավասությունները:
2. Բաժինը կառուցվածքային ստորաբաժանում է, որը ենթակա և անմիջական պատասխանատու է Ինստիտուտի արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորին:
3. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ կրթության ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը, Ինստիտուտի կանոնադրությունը և Ինստիտուտի ներքին իրավական ակտերը:
4. Բաժինը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է ՀՖԿՍՊԻ-ի կառուցվածքային ստորաբաժանումների, տեղական ու միջազգային տարբեր կազմակերպությունների հետ:
5. Բաժինը ունի ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բաժնի նպատակներն են՝

2.1 Խթանել միջազգայնացման գործընթացները՝ իրականացնելով ՀՖԿՍՊԻ–ի ռազմավարական պլանի առաքելությունը, խնդիրներն ու նպատակները

2.2 ինստիտուտը դարձնել օտարազգի ուսանողների ուսուցման մրցունակ կրթօջախ:

2.3 Նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Բաժնի խնդիրներն են.

1. ինստիտուտի միջազգային համագործակցության, գիտության, գիտական աշխատանքների որակի ապահովման, համաշխարհային գիտակրթական գործընթացներում ինստիտուտի հետագա ինտեգրման գործընթացների կազմակերպման նպատակով առաջնակարգ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ առկա համագործակցության հետագա ընդլայնում և նոր պայմանագրերի կնքում,
2. արտերկրից օտար և սփյուռքահայ ուսանողների՝ ինստիտուտում գիտաուսումնական գործընթացին նեգրավման նպաստում,
3. ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին տարբեր գիտական ծրագրերում ներգրավելու աշխատանքների, այդ թվում՝ փոխանակման ծրագրերի կազմակերպում,
4. միջազգային դրամաշնորհային ծրագրերին դիմելու հնարավորությունների բացահայտում և հայտի ներկայացում,
5. հայրենիք-սփյուռք գիտամշակութային կապերի զարգացման գործընթացի կատարելագործում և ընդլայնում,
6. գիտական միջոցառումների, այդ թվում՝ միջազգային սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների, կլոր սեղանների, կոնֆերանսների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպում,
7. վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ օտար լեզվով դասավանդող մասնագետների համար:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնում գործում է 4 հաստիք՝ բաժնի ղեկավար, կրթական ծրագրերի պատասխանատուներ (2) և բաժնի մասնագետ:
2. Բաժնի աշխատանքների անմիջական համակարգումն ու հսկողությունն իրականացնում է բաժնի ղեկավարը, բաժինը ենթակա և անմիջական պատասխանատու է Ինստիտուտի արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորին
3. Բաժնի աշխատողները պարտավոր են իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության, Ինստիտուտի կանոնադրության, ՀՖԿՍՊԻ-ի ներքին կարգապահական կանոններին, Ինստիտուտի ներքին իրավական ակտերին, աշխատանքային պայմանագրով ամրագրված պահանջներին համապատասխան:

4. Բաժնի աշխատակիցները կարող են այլ կառուցվածքային ստորաբաժանումներից իրենց իրավասությունների շրջանակում հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ:
5. Բաժնի աշխատողները կարող են հանդես գալ իրենց աշխատանքային պայմանների բարելավման և բաժնի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու առաջարկություններով:

4. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը

4.1. կազմակերպում է արտասահմանյան ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի բանակցային գործընթացները,

4.2. Վերահսկում է ինստիտուտի միջազգային գործունեության համակարգումը, կազմակերպում և իրականացնում միջազգային ծրագրերը,

4.3. կազմակերպում է արտասահմանյան ուսանողների ամենամյա ընտրությունն ու ընդունելությունը, համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ

4.4. համագործակցում է Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի ակադեմիաների, ինստիտուտների և մարզական կազմակերպությունների հետ

4.5. իրագործում է ուսանողների, ասպիրանտների և դասախոսական կազմի ներկայացուցիչների միջազգային փոխանակությունները և փոխայցելությունները համագործակցելով Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների հետ, կատարում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ գործունեության ծրագրերի մշակում,

4.6. նախապատրաստում է ինստիտուտի և օտարերկրյա բուհերի, գիտական հիմնարկների, գերատեսչությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև պայմանագրերի (համաձայնագրերի, ինչպես նաև համագործակցության ծրագրերի, պլանների) գործընթացը և իրականացնում կնքված պայմանագրերի պահանջների, պարտավորությունների կատարման վերահսկողություն իր իրավասությունների շրջանակներում,

4.7. ձևակերպում է ինստիտուտում կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասախոսություններ կարդալու նպատակով օտարերկրյա մասնագետների հրավերներ, զբաղվում նրանց գրանցման և հրամանագրման, նրանց կեցության

պայմանների կազմակերպման, ըստ անհրաժեշտության նաև նրանց գործունեության վերաբերյալ վկայագրերի հանձնման գործընթացներով,

4.8. իրականացում է գիտության զարգացման այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների (միջազգային դրամաշնորհներ, անհատների նվիրատվություններ) ձեռքբերման միջոցառումները

Բաժնի ղեկավարը՝

1. համակարգում է ՀՖԿՍՊԻ-ի միջազգային համագործակցության ոլորտում միջազգային և միջբուհական կապերի ստեղծման աշխատանքները,
2. ընթացք է տալիս արտաքին կապերի և միջազգային համագործակցության վերաբերյալ ՀՖԿՍՊԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկներին և ծրագրերին,
3. համակարգում է ՀՖԿՍՊԻ -ի աշխատակիցների և օտարերկրյա պատվիրակությունների պաշտոնական այցերի հետ կապված աշխատանքները,
4. Համակարգում է պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների և հետազոտողների միջազգային շարժունության ծրագրերը,
5. կազմակերպում է օտարերկրյա և սփյուռքի դիմորդների ընդունելության գործընթացը,
6. կազմակերպում է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ժամանակավոր կացության քարտերի ձեռքբերման գործընթացը՝ ըստ սահմանված կարգի,
7. նախապատրաստում է համագործակցության պայմանագրերի, նամակների, գրությունների նախագծեր՝ ուղղված օտարերկրյա և միջազգային կառույցներին, համալսարաններին, ՀՀ-ում դեսպանատներին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ համագործակցելով ՀՖԿՍՊԻ -ի այլ ստորաբաժանումների հետ,
8. համագործակցում է ՀՖԿՍՊԻ-ի գերակա (առաջատար, առաջնային) ուղղություններին համապատասխան համալսարանների և գիտական կենտրոնների հետ՝ շարունակական համագործակցություն հաստատելու ուղղությամբ,
9. մշակում է բուհի գործունեության միջազգայնացման ռազմավարություն՝ ըստ բուհի առաջնահերթությունների, կրթական տարածքներին ինտեգրման գերակայությունների, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և համագործակցության այլ ուղղությունների,
10. կատարում է անմիջական ղեկավարի կողմից տրվող այլ հանձնարարականներ:

Բաժնի կրթական ծրագրերի պատասխանատուները՝

1. ուսումնասիրում է համապատասխան ոլորտի Եվրոպական առաջատար համալսարանների կրթական ծրագրերը,
2. կատարում է տվյալների հավաքագրում
3. կատարում է նախնական վերլուծություն և հանդիպում ֆակուլտետների դեկանների, որակի ապահովման բաժնի ղեկավարի, ինչպես նաև համապատասխան ամբիոնի վարիչների հետ
4. կատարում է համեմատական վերլուծություն (Բենչմարքինգ)՝ համագործակցելով բուհի համապատասխան բաժինների ղեկավարների հետ,
5. ձևակերպում է կրթական ծրագրի հայտը, հետամուտ լինում ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի ստեղծման և փորձաքննության եզրակացությունների կատարմանը
6. դեկանների հաստատումից հետո համապատասխան կրթական ծրագրի պատասխանատուն ստեղծված խմբի հետ կազմում է ծրագրի հաստատման հետագա գործընթացի ժամանակացույցը,
7. կատարում է անմիջական ղեկավարի կողմից տրվող այլ հանձնարարականներ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը, նրանում կատարվող լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:
2. Սույն կանոնակարգով ուժը կորցրած ճանաչել Ինստիտուտի ռեկտորի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 39 հրամանը:
3. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատման պահից: